

Կախա Գաբունիա

## ԼԵԶՎԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿԼԵԶՈՒ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

### Համառոտագիր

Հոդվածը վերաբերում է երկլեզու կրթության արդյունավետ ձևերից մեկին, որն Արևմուտքում հայտնի է առարկայական բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման անունով: Ուսումնական գործընթացում երկու լեզվի կիրառումն ուսուցչից լուրջ պատրաստվածություն է պահանջում: Որպեսզի աշակերտները երկու լեզվից հասնեն բարձր իրազեկությունների և միևնույն ժամանակ յուրացնեն առարկայի բովանդակությունը, դասարանում անհրաժեշտ է դասի ռազմավարական և լեզվական պլանավորում: Հաճախ աշակերտները չեն կարողանում յուրացնել ուսումնական առարկան երկրորդ լեզվի սահմանափակ իմացության պատճառով, ինչը դառնում է նրանց ակադեմիական հետ մնալու պատճառ: Միևնույն ժամանակ առարկաների մանկավարժները վախենում են, որ ինտեգրված դասի ժամանակ լեզվական իրազեկությունների բարձրացմանը որոշակի ժամանակ տրամադրելը բացասաբար կազդի Ազգային ուսումնական պլանի վրա տվյալ առարկայից (մաթեմատիկա, ֆիզիկա, աշխարհագրություն և այլն), իսկ այն պարտադիր է բոլոր առարկաների համար: Հոդվածում տրված են կոնկրետ երաշխավորություններ առարկայական մանկավարժների համար, թե ինչպես պլանավորեն երկլեզու դասը, ինչ տիպի ակտիվություններ կիրառեն այսպիսի դասերի անցկացման ժամանակ, երբ օգտագործեն երկրորդ լեզուն և ինչ չափով, ինչ խնդիրների կարող են հանդիպել:

Վրաստանում երկլեզու կրթության հաստատման անհրաժեշտությունը պայմանավորում է առկա լեզվական իրավիճակը փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում. պետական լեզվի գործառույթի շրջանակը շատ սահմանափակ է, որպես հաղորդակցության լեզու, փոքրամասնության լեզվի հետ մեկտեղ,

կրկին կիրառվում է ռուսերենը: Ճիշտ է արդեն բացահայտ է ռուսաց լեզվի կողմից «դիրքերի զիջումը», սակայն, ցավոք, ոչ վրաց լեզվի հաշվին ... Պետական լեզվի կիրառման հետ կապված, կրկին ծանրագույն վիճակ է, վրացերենը ուսուցանվում է միայն դպրոցում, որպես մեկ հերթական առարկա, ինչը բոլորովին բավական չէ (որքան կատարելագործված

և լիարժեք ծրագրով թե դասագրքերով էլ դասավանդվի այն) երկրորդ լեզվի լիարժեք տիրապետման համար:

Փոքրամասնությունների դպրոցներում լեզվական միջավայրը փոխելու և պետական լեզվի գործառնության ավելացման լավագույն միջոցը համարում ենք առկա պայմաններում հենց **երկլեզու կրթության այս կամ այն մոդելի** ընտրությունը, տեղական առանձնահատկությունների նախատեսումը և ընտրված մոդելի հղկման-վերամշակման վրա աշխատելը: Չէ՞ որ երկլեզու կրթության նպատակը, մի կողմից՝ պետական լեզվի համապատասխան մակարդակով յուրացումն է, իսկ մյուս կողմից՝ փոքրամասնությունների լեզուների պահպանման և զարգացման մասին հոգածությունը: Այսպիսի հայեցակարգային մոտեցումը փոքրամասնությունների ներկայացուցիչներին ազատում է լեզվական, և նրա հետ, այսպես ասած, «կապված» ազգային ինքնանույնականությունը կորցնելու վտանգի զգացումից և բարձրացնում է սովորողների և ծնողների պատճառաբանվածությունը սովորել պետական լեզուն՝ նրանց համար պարզ է դառնում դպրոցական երկլեզու կրթությունը դեռահասին պատրաստելու գործիք է՝ նրա կարիերային առաջընթացի և սոցիալ-տնտեսական թե քաղաքական բնագավառներում հաջողության հասնելու համար: Միևնույն ժամանակ, երեխայի մշակութային միջավայրը ոչ թե ճնշվում է, այլ զարգանում է և ավելի լավ է

դրսևորվում՝ երկրորդ լեզվի միջավայրի հետ համեմատության ֆոնի վրա:

Երկլեզու կրթության արդյունավետությունն, ընդհանրապես, կախված է կոնկրետ երկրում, կոնկրետ տարածաշրջանում **ուսուցման մոդելի** ճիշտ ընտրությունից՝ հնարավոր է ոչ ճիշտ ընտրված մոդելը հակառակ արդյունքի հասցնի, օրինակ, Վրաստանի դպրոցական տարածքում երկլեզու կրթության թույլ ծրագիրը՝ իմերսիան, պակաս է արդարացնում: Կարծում ենք, ավելի ընդունելի և արդյունավետ են **երկակի երկլեզու կրթության և հարստացնող երկլեզու կրթության մոդելները**, ընդհանրապես, ամենից ընդունելի և արդյունավետ ձև ենք համարում **երկրորդ լեզվի ուսուցումը՝ հիմնվելով բովանդակության վրա (content-based second language teaching)**, կամ **առարկայական բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցումը՝** ուսուցման մեթոդիկան, որն ընդլայնում է լեզվական իրազեկությունն այնպիսի կոնկրետ առարկաների (բնագիտական, հասարակական, գեղագիտական) բովանդակության վրա հիմնվելով, որը հեռանում է լեզվի ուսուցման սովորական, ավանդական դասից: Ուսուցիչը **կոնկրետ առարկայի** ուսուցման հետ մեկտեղ, աշակերտին օգնում է **խորացնել այն լեզվի իմացությունը**, որ լեզվով իրականացվում է առարկայի ուսուցումը:

Դասի գործընթացում երկու լեզվի կիրառությունն ուսուցչից պահանջում է լուրջ պատրաստվածություն: Ուսուցիչը կարող է դասը բացատրել մեկ լեզվով, իսկ

մեկնաբանություններն անել մյուս լեզվով, վիզուալ և օժանդակ նյութը պատրաստել վրացերեն, իսկ ուսումնական ակտիվություններն իրականացնել, օրինակ՝ հայերեն (կամ ադրբեջաներեն): Որպեսզի աշակերտները երկու լեզուներից էլ հասնեն բարձր իրազեկությունների, դասարանում անհրաժեշտ է **ռազմավարական լեզվական պլանավորում:**

Հետազոտողները շատ արդյունավետ են համարում **անդրլեզվական մեթոդը**, որը հաջողությամբ գործում է Ուելսի միջնակարգ դպրոցներում: Անդրլեզվական մեթոդը նկատի ունի այն, որ կարդալը և լսելն իրականացվում է մեկ լեզվով, իսկ խոսելը և գրելը՝ երկրորդ լեզվով, և ուսուցման գործընթացում հաճախ փոխվում են լեզուների գործառնությունները: Օրինակ՝ դասի ժամանակ աշակերտները կարդում են անգլերեն, իսկ այդ հարցի շուրջ բանավեճն ընթանում է իսպաներեն, իսկ բանավեճի ընթացքում ուսուցիչը ճշգրտումներն անում է անգլերեն: Դասի վերջում աշակերտները գրավոր առաջադրանքը կատարում են իսպաներեն: Երկրորդ դասին լեզուների նշանակումը փոխվում է, անգլերենն օգտագործվում է խոսելու և գրելու համար, իսկ իսպաներենը՝ լսելու և կարդալու կարողությունների զարգացման ... (Ուիլյամս, 1994, 1996).

Անդրլեզվական և անդրգրագիտության մոտեցումն ունի չորս ընդգծված առավելություն. **առաջին**՝ նպաստում է առարկայի ավելի խորը և լրիվ իմաստավորմանը, քանի որ այս դեպքում տեղի է ունենում ուսումնական նյութի ընթերցում և ունկնդրում մեկ լեզվով, իսկ

գրելը և բանավեճը՝ երկրորդ լեզվով, ինչը նկատի ունի, որ ուսումնական նյութը իմաստավորված է և յուրացված, ինչին հաճախ չենք կարողանում հասնել միալեզու ուսուցման իրավիճակներում: **Երկրորդ**՝ անդրլեզվայնությունն օգնում է աշակերտին զարգացնել լեզվական իրազեկությունն իր համար ավելի թույլ լեզվից ևս: Սովորական իրավիճակում աշակերտն աշխատում է բարդ առաջադրանքները կատարել իր ուժեղ լեզվով, իսկ հեշտ հանձնարարությունները՝ երկրորդ լեզվով: Անդրլեզվային մոտեցման ժամանակ աշակերտը բոլոր հանձնարարությունները հավասարաչափ է կատարում երկու լեզվով, ինչը նպաստում է նրան, որ նա զարգացնի նաև իր համար թույլ լեզուն: Անդրլեզվական մոտեցումն ապահովում է ակադեմիական լեզվական կարողությունների զարգացում երկու լեզվից էլ, ինչն ի վերջո հասցնում է մինչև լրիվ երկլեզվություն և երկակի գրագիտություն: **Երրորդ**՝ երկու լեզվի օգտագործումը նպաստում է ընտանիքի և դպրոցի համագործակցությանը: Այս մոտեցումը ծնողներին հնարավորություն է տալիս ավելի ընդգրկված լինել դպրոցական կյանքի մեջ և, միևնույն ժամանակ, օգնել իր զավակին ուսումնական գործընթացում: **Չորրորդ**՝ անդրլեզվայնությունը նպաստում է, օրինակ՝ վրացերենի, որպես մայրենի լեզու, իմացող և վրացերենի, որպես երկրորդ լեզու, սովորող աշակերտների հարաբերություններին և միմյանց ինտեգրման գործընթացին: Բացի այդ, դասարանում երկու լեզուների ճիշտ և ռազմավարորեն օգտագործումն ապահովում է աշակերտների մեջ երկրորդ

լեզվի յուրացում և ուսումնական առարկայի լիարժեքորեն ուսանում միաժամանակ: (Բեյքեր, 2010, էջ 296).

Ուսումնական առարկայի բովանդակության և լեզվի յուրացման ինտեգրումը ուսումնական գործընթացի գլխավոր խնդիրներից մեկն է, որը պետք է կատարի ուսուցիչը, որպեսզի կարողանա հաջողությամբ անցնել իր առարկայի վրացերեն ուսուցման: Սա իսկապես բարդ խնդիր է, որի վճռումը հնարավոր է միայն ուսուցիչների համագործակցության արդյունքում: Այստեղ, նախ՝ նկատի ունենք վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցիչների և այլ ուսումնական առարկաների ուսուցիչների միջև ակտիվ և կանոնավոր համագործակցությունը:

Երկլեզու կրթության դեմ առաջ քաշված ամենագլխավոր փաստարկներից մեկն այն տեսակետն է, թե աշակերտներն ուսումնական առարկան չեն կարող յուրացնել երկրորդ լեզվի սահմանափակ իմացության պատճառով՝ նրանք ուսումնական առարկան պետք է յուրացնեն այն լեզվով, որը դեռ յուրացման փուլում է: Իսկապես, հետազոտությունները հավաստում են, որ ակադեմիական և բարդ լեզվի կիրառումն ուսումնական առարկայի յուրացման ժամանակ անհաղթահարելի դժվարություններ է ստեղծում այն աշակերտների համար, որոնք ուսուցման լեզվից քիչ գիտելիքներ ունեն: Չի կարելի նաև ուսումնական առարկայի բովանդակության ուսուցումը հետաձգել՝ սա առաջացնում է հասակակիցների համեմատ ուսման մեջ հետ ընկնել, և կորցնում է աշակերտի սովորելու ցանկությունը

(Իեվինա, 2009, էջ 79): Բացի այդ, առարկայական մանկավարժները վախենում են, որ ինտեգրված դասի ժամանակ լեզվական իրազեկությունների բարձրացմանը որոշակի ժամանակ տրամադրելը բացասաբար կազդի Ազգային ուսումնական պլանի վրա տվյալ առարկայից (մաթեմատիկա, ֆիզիկա, աշխարհագրություն և այլն), իսկ այն պարտադիր է բոլոր առարկաների համար:

Ուսուցման լեզվի և ուսումնական առարկայական բովանդակության ինտեգրումը նշանակում է լեզվական իրազեկությունների ընդգրկում առարկայական դասերի մեջ: Ինտեգրված մոտեցումը կամուրջ է ձգում երկրորդ լեզվի դասերի և առարկայական դասերի միջև: Այս մոտեցման կիրառման հետևանքով երկու դրական արդյունք է նվաճվում՝ երկրորդ լեզվի և այլ ուսումնական առարկայի նյութի (առարկայական բովանդակության) յուրացում:

Ուսումնական առարկայի դասին ուսուցիչը ուսումնական նյութն ուսուցանում է աշակերտի լեզվի ճանաչողական մակարդակի համապատասխան, իսկ աշակերտի լեզվի իմացության մակարդակին համապատասխան ընտրում է **հաղորդակցական ակտիվություններ**: Այսպիսով, լեզուն վերածվում է նյութի յուրացման միջոցի, գործիքի և ոչ թե **ուսուցման առարկայի**:

Լեզվի և առարկայական բովանդակության ինտեգրված ուսուցումն մանկավարժից պահանջում է մի քանի կարևորագույն կարողությունների զարգացում՝ սա հավասարապես

վերաբերում է ինչպես երկրորդ լեզվի մանկավարժին, այնպես էլ այլ առարկաների ուսուցիչներին.

**1.Բազմապիսի տեղեկություններ պարունակող միջոցների**

**օգտագործում**. որպեսզի երկրորդ լեզվի նյութը ըստ հնարավորինս հեշտ ընկալելի դառնա, ուսուցիչը տեղեկությունը բազմերանգ նյութերի կիրառությամբ պետք է մատուցի աշակերտներին. իրական առարկաների, աղյուսակների, պատկերների, դիագրամների, մասնուցացողության, նախօրոք ընթերցման և գրելու ռազմավարությունների կիրառությամբ:

**2.Աշակերտներին կողմնորոշված ուսուցման գործընթացի կազմակերպում՝** ուսուցման

կենտրոնում պետք է լինի աշակերտը, նրա հետաքրքրությունները և անհրաժեշտությունները: Աշակերտն ակտիվ օբյեկտ է, ուսուցչի գործառույթն է աշակերտների համագործակցության և յուրաքանչյուր աշակերտի գիտելիք ստանալու գործընթացի մեջ ակտիվ ընդգրկմանն օժանդակելը: Ուսուցիչն աշխատանքն այնպես պետք է պլանավորի, որ զարգացնի աշակերտի վերլուծության կարողությունը, ինչն անհրաժեշտ է յուրացվելիք նյութի հետագայում օգտագործման համար (Իեվինա, 2010, էջ 82).

Ինտեգրված դասի անցկացմանը լուրջ նախապատրաստում է անհրաժեշտ՝ նախ՝ պետք է սահմանվեն ինչպես առարկայական, այնպես էլ լեզվական նպատակները: Պետք է սահմանվի և պլանավորվի յուրաքանչյուր

ակտիվությունը՝ պետք է ճշգրտվի ընտրված ակտիվության մեջ յուրաքանչյուր լեզվի՝ մայրենիի թե երկրորդ լեզվի գործառույթը (օրինակ՝ տերմինները, գծապատկերները, դիդակտիկ նյութերը կազմում ենք վրացերեն, վրացերեն տալիս ենք նաև հեշտ հրահանգներ՝ «պատասխանի՛ր», «պատմի՛ր դասը», «կատարիր առաջադրանքը» և այլն), ինչ վերաբերում է նարատիվին (օրինակ՝ աշակերտի կողմից դասը պատմելուն), այս փուլում չպետք է ստիպենք աշակերտին երկրորդ լեզվով հաղթահարել այս բարդ հանձնարարությունը:

Ինտեգրված մոտեցման պլանավորման համար գերադասելի է նախապատրաստման հետևյալ եղանակը՝ մինչև ինտեգրված մեթոդի օգտագործման սկսելը, առարկայի ուսուցիչը պետք է գիտենա, թե ինչ միջոցներ է օգտագործում երկրորդ լեզվի մանկավարժն իր դասերի ժամանակ: Այս տեղեկությունը ստանալու համար ուսուցիչները պետք է հաճախեն միմյանց դասերի և դիտարկեն դասարանում աշխատելու գործընթացը: Իհարկե, լավ է, որ առարկայի և լեզվի ուսուցիչները նախօրոք պատրաստվեն վարժանքների միջոցով (նշում ենք, որ այս ուղղությամբ արդեն արվել են առաջին քայլերը և Վրաստանի 40 փորձարկային երկլեզու դպրոցների մանկավարժներ անցել են վարժանք երկլեզու ուսուցման մեթոդաբանությունից և ռազմավարություններից՝ տե՛ս Ն.Շարաշենիձեի հոդվածն այս ամսագրում՝ Շարաշենիձե, 2010):

Լեզվի և այլ ուսումնական առարկաների ուսուցիչները միասին

աշխատելիս, պետք է սահմանեն լեզվական դժվարությունները և աշակերտի համար անհրաժեշտ կարողությունները, որոնք համապատասխան առարկայի նյութի յուրացման համար են անհրաժեշտ (օրինակ՝ ուղեցույցը կարդալու կարողություն, վարժությունների տեսքում հանձնարարության կատարման կարողություն, տարբեր տերմինների նշանակությունը պարզելու կարողություն, սեփական կարծիքի արտահայտման և հիմնավորման կարողություն և այլն):

Հաջորդ քայլը առարկայական և լեզվի ուսուցչի միասնական աշխատանքի գործընթացում այն հիմնախնդիրների սահմանումն է, որոնք հնարավոր է ունենան աշակերտներն այս կամ այն նյութը (նկատի ունենք առարկայական նյութը) յուրացնելիս: Այս տիպի հիմնախնդիրներ կարող են ծագել, օրինակ, նրա պատճառով, որ դասագրքերի կամ այլ, օժանդակ տեքստերի բառապաշարն չափից ավելի բարդ է: Այսպիսի դեպքերում երկրորդ լեզվի ուսուցիչն օգնում է առարկայական ուսուցչին կազմել դիդակտիկ նյութեր, որտեղ առավելագույնս պարզեցված կլինեն ուսումնասիրվելիք պարտադիր տերմինները և այն պարզ լեզվական կառույցները, որոնց կիրառումով աշակերտը կկարողանա գիտելիք դրսևորել երկրորդ լեզվով, հիմնական ասելիքը հաղորդել վրացերեն:

Առարկայական ուսուցիչը պետք է սահմանի իր առարկայի ուսուցման գործընթացում ամենից հաճախ կիրառվելիք բառերի ցանկը: Երկրորդ լեզվի ուսուցչի հետ համագործակցությամբ պետք է ապահովենք այս բառերի ճիշտ

օգտագործման կարողություն: Հնարավոր է անհրաժեշտ դառնա հիմնական բառերն աշակերտներին նախօրոք ծանոթացնելը: Ուսուցիչը կարող է դասի ընթացքում առանձնահատուկ ուշադրություն դարձնել այնպիսի բառերի վրա, որոնք կարող են աշակերտների մտածողությունը ճիշտ ուղղությամբ տանել, օգնել գտնել պատճառա-հետևանքային կապերը և գտնել պատասխանները:

Ինչպես ասվել է բազմիցս, ինտեգրված դասը բացատրելիս, պարտադիր է բազմապիսի վիզուալ նյութի օգտագործումը, օրինակ՝ կարելի է թղթի վրա գրված և կտրված, վրացերեն կատարված անհրաժեշտ տերմիններ փակցնել: Այս լրացուցիչ տեղեկությունը որոշ ժամանակ կարող է մնալ տեղադրված վիզուալ նյութի վրա: Երբ կհամոզվեք, որ աշակերտները նոր տերմինները յուրացրել են, կարող եք հանել փակցրած թերթերը: Բացի այդ, ուսուցիչը պետք է ստեղծի իրավիճակներ, որոնցում նա կկարողանա համոզվել, որ աշակերտներն արդեն տիրապետել են նոր տերմիններին:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նախանշի կարևորագույն նպատակները և հենց նրանց հարմարեցնի համապատասխան նյութը, որպեսզի խուսափի ոչ անհրաժեշտ մանրուքների և մանրամասների ուսուցումից: Առարկայի ուսուցիչը կարող է գտնել այլընտրանքային ուսումնական գրքեր կամ այլ նյութ, որոնց բացատրություններն ավելի են համապատասխանում երկրորդ լեզվի յուրացման գործընթացի մեջ գտնվող աշակերտներին: Ուսուցիչը կարող է նաև

արդեն եղած տեքստերը հարմարեցնել աշակերտի լեզվի իմացության մակարդակին: Չպետք է մոռանանք, որ նոր թեմա սովորեցնելիս առաջին հերթին անհրաժեշտ է պատրաստել հեշտությամբ ընկալելի նյութ, իսկ հետևյալ դասերին աստիճանաբար ավելացնել լեզվական բազմերանգությունը, մինչև թեմայի ամբողջական յուացումը:

Շատ կարևոր է դասի սկզբին նպատակները գրել գրատախտակին և վրաց լեզվով բարձրաձայն ասել (հնարավոր է այս նպատակներն աշակերտներին էլ կրկնել տալ): Օգտակար կլինի նաև նրա պարզաբանումը, որ այս դասը նախորդ և հաջորդ դասերի հետ սերտ կապի մեջ է:

Մինչև աշակերտները կսկսեն որևէ աշխատանք կատարել, ուսուցիչը նրանց պետք է ծանոթացնի ամբողջ վարժությանը: Ցանկալի է, որ ուսուցիչը կարողանա այս նկարագիրը ներկայացնել վրաց լեզվով, թեպետ, նկատի ունենանք, որ պայմանը հասկանալը կարևորագույն բաղադրամաս է և մայրենի լեզվի կիրառության սահմանափակումն այս բաղադրամասում նպատակահարմար չէ: Սրանից հետո ուսուցիչը կարող է աշակերտներին թույլ տա, որ այս հանձնարարությունն իրենք կատարեն աստիճաններով: Այս եղանակն առանձնապես մաթեմատիկայի և այլ ճշգրիտ գիտությունների վարժությունների կատարման համար է հարմար:

Անհրաժեշտ է, որ աշակերտների համար ստեղծենք համագործակցության և դասարանում աշխատելու փոխադարձ կապերի նախապայման: Թույլ չի տրվում,

որ ուսուցիչը միայն դասախոսության ձևաչափն օգտագործի՝ ինքը շատ խոսի, իսկ աշակերտները պասսիվ լինեն: Աշակերտների ինքնուրույն, գույգերով կամ խմբերում աշխատանքը լավագույն ձև է ինտեգրված ուսուցման համար: Նրանք ակտիվորեն պետք է ընդգրկված լինեն դասի բոլոր հատվածներում: Այս դեպքում աշակերտները լավ կյուրացնեն ինչպես առարկայական նյութը, այնպես էլ կբարելավեն իրենց լեզվի իմացությունը: Ուսուցիչը արհեստականորեն պետք է ստեղծի իրավիճակներ, որոնցում աշակերտներին հնարավորություն կտրվի կիրառել առարկայի համապատասխան բառապաշարը և առարկայական բովանդակության մասին հարցերի շուրջ խոսել, նաև գրավոր իրենց միտքն արտահայտել վրաց լեզվով:

Լեզվի յուրացման ընթացքում աշակերտները խոսելիս սխալներ են թույլ տալիս: Սա բնական երևույթ է: Երկլեզվային ուսուցիչը պետք է հանդգնած լինի, որ աշակերտները հասկանում են տեղեկությունը և չպետք է չափից ավելի ուշադրություն դարձնի ուղղագրությանը և ոճական կողմին: Իհարկե, ուսուցիչն ինքը ճիշտ ձևը պետք է առաջարկի, սակայն արդարացված չէ նրանից պահանջել անսխալ խոսել: Գլխավոր դերը լեզվի ճիշտ կիրառության յուրացման մեջ զբաղեցնում է լեզվի ուսուցիչը և ոչ թե այս կամ այն առարկայի մանկավարժը:

Ինտեգրված դասերի հաջող արդյունքի համար մեծ նշանակություն է շնորհվում ճիշտ և ճաշակով ընտրված ակտիվություններին: Ընտրենք

ակտիվություններ, որոնք աշակերտներին կօգնեն, որ իրենք հայտնաբերեն նոր տեղեկությունը: Ուսուցիչն աշակերտներին օգնում է կազմակերպել տեղեկությունը և նրանց համար պլանավորում է կատարվելիք գործողությունների հաջորդականությունը: Բնագիտական ուղղության կամ սոցիալական գիտությունների դասերին մեծ հաջողությամբ կարելի է կիրառել այն եղանակները, որոնցում աշակերտները նախագծի մեթոդով հետազոտում են իրենց իսկ ընտրած թեման: Ուսուցիչը գործում է որպես համակարգող՝ աշակերտը սահմանում է հիմնախնդիրը, փնտրում է նրա պատճառները, անցկացնում հետազոտություններ կամ փորձեր և որոնում հիմնախնդրի վճռման ուղիներ: Լեզվի իմացության մակարդակը, իմաստը հասկանալու համար արտահայտվելու կարողությունը և նախագիծը կազմելու գործընթացում ուրիշների կարծիքների իմանալը ձեռք է բերում կոնկրետ գործնական նշանակություն: Այս ժամանակ հնարավոր է վրաց լեզուն կիրառել որպես տեղեկության կուտակման, տվյալների մշակման, փաստարկման հնարավորություն:

Երաշխավորվում է, որ ուսուցիչն օգտագործի ակտիվություններ, որոնցում անհրաժեշտ կլինի, որ աշակերտները գտնեն պակաս տեղեկությունները. այս տիպի ակտիվություններին են պատկանում դերային խաղերը, իրադրական, հարց-պատասխանների վարժությունները, հիմնախնդիրների վճռումը: Յուրաքանչյուր աշակերտ (դասարանում կամ խմբում) ունի մեկ կամ երկու տեղեկության հատված,

որոնք անհրաժեշտ են վարժությունը կատարելու համար, սակայն անհրաժեշտ չէ տեղեկության լրիվ մատուցում: Աշակերտները միասին պետք է աշխատեն, պետք է փոխանակեն տեղեկությունները: Այս եղանակով կարելի է վարժել նրանց խոսելու և մտածելու կարողությունը և բարելավել լեզվի իմացության մակարդակը:

Այս տիպի դասերում շատ արդյունավետ է այսպես կոչված «բառերի ցանցի» (semantic xebing) կիրառումը: «Ցանցը» հաճախ կիրառվում է որպես գրելուն նախորդող ակտիվություն, սա հոյակապ վարժություն է նաև նոր թեմայի քննարկումից կամ կարդալուց առաջ: Այն օգնում է աշակերտներին հավաքել մտքերը և դասավորել տեղեկատվությունը: Աշակերտները (ուսուցչի օգնությամբ կամ առանց նրա), նախ՝ կարող են գրել տարեթվերը, տերմինները, հակացությունները՝ առանց հաջորդականության և այնուհետև կազմել ցանցը, կամ հենց սկզբից այսպես սկսեն՝ զուգորդություններ և աղյուսակներ ստեղծելով (Իեվիմա, 2009, էջ 93)..

Հետագայում աշակերտները «ցանցը» կարող են օգտագործել համապատասխան թեմայի մասին խոսելիս կամ գրելիս: Սա կօգնի կիրառել թվարկած կարգերը մտքի արտահայտման պատմողական ձևում:

Թեմայի յուրացման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի լսելու ակտիվություններին. թեմային համապատասխան նյութի լսելը աշակերտներին հնարավորություն կտա տրամադրվել թեմայի մեջ թափանցելու



համար: Դրա ապահովման համար կարելի է աշակերտներին առաջարկել որևէ երգ, բանաստեղծություն կամ թեկուզ կարճ պատմվածք և սրանից հետո նրանց շահագրգռել, որ համառոտ խոսեն այս հարցի վերաբերյալ:

Բավականին բարդ հարց է կոնկրետ ակտիվության թե, ընդհանրապես, դասի գնահատումը ինտեգրված ուսուցման ընթացքում, այստեղ առաջանում է մեկ հիմնախնդիր, որը լրացուցիչ գլոխկոտրուկ է ստեղծում ուսուցչի համար. երբ աշակերտը չի կարողանում կատարել այս կամ այն առաջադրանքը, պետք է պարզել, թե սա

տեղի է ունենում առարկայական բովանդակության ոչ լիարժեք կերպով յուրացման, թե լեզվական իրազեկությունների ցածի մակարդակի պատճառով ... Այս հիմնախնդիրը իսկապես կարևոր է, և մանկավարժը պետք է կիրառի մի շարք գնահատման ակտիվություններ, որպեսզի կարողանա ճիշտ ախտորոշել, պարզել պատճառը, թե ինչու է տեղի ունեցել նվաճման գործընթացում խափանում: Սա առանձին թեմա է և հատուկ քննարկում է պահանջում:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բեյքեր 2010 – Կ. Բեյքեր Երկլեզվության և երկլեզու կրթության հիմունքները, Թբիլիսի, Սահմեդո, 2010 թ.:

Իեվինա, 2009 – Է.Իեվինա, Առարկայական բովանդակության և ուսուցման լեզվի յուրացման ինտեգրում դասի ժամանակ, Երկլեզու կրթություն, Սեդանի գիրք ուսուցիչների համար, Թբիլիսի, Սահմեդո, 2009 թ.

Ուիլյամս, 1994 – WILLIAMS, Cen, 1994, Ar-farniad o Ddulliau Dysgu ac Addysgu yng Nghyd-destun Addysg Uwchradd Ddwyethong. Unpublish PhD thesis. Bangor: University of Wales.

Ուիլյամս, 1996 – WILLIAMS, Cen, 1996, Secondary education: Teaching in the bilingual situation. In C.

WILLIAMS, G. LEWIS & C. BAKER (eds), The Language Policy: Taking Stock. Llangedfn (Wales): CAI.

Շարաշենիձե, 2010 – Ն.Շարաշենիձե, Վարժանքներ ինտերմշակութային և երկլեզու ուսուցման մեթոդներից և ռազմավարությունից, «Երկլեզու կրթություն» ամսագիր, Թբիլիսի, 2010 թ., № 1.